

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ՌՈՒՍ-ՌՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ


DOI: 10.52174/2579-2989_2022.2-25

Հիմնաբառեր. *հակամարտություն, վերաֆինանսավորման տրոստարույք, ֆինանսական շուկաներ, վարարեսական սպասումներ*

Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտությունը, անշուշտ, ազդեցություն է ունենում ինչպես նշված երկու երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության և ֆինանսական շուկաների վրա: Ստեղծված բարձր ռիսկայնության, անորոշության, վարարեսական սպասումների պայմաններում ներդրողները և ֆինանսական կառույցները փորձում են արագորեն արձագանքել անընդհատ փոփոխվող իրողություններին: Շուկայի մասնակիցները հետևում են շուկայում գերիշխող միտումներին, հեղինակավոր կառույցների կանխատեսումներին, հակամարտող երկրների կողմից ձեռնարկվող քայլերին՝ ուղղված պետական պարտքն առաջիկայում սպասարկելուն, կիրառված պարտժամրոցների հետևանքները մեղմելուն և այլն:

Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտությունն ակնհայտորեն անդրադառնում է համաշխարհային ֆինանսական շուկաների տարբեր հատվածների վրա: Ստեղծված տնտեսական և քաղաքական նոր իրողություններին հարմարվելու և համահունչ գործելու նպատակով իրենց քաղաքականություններում ճշգրտումներ են կատարել ինչպես կենտրոնական բանկերը, այնպես էլ անհատ և ինստիտուցիոնալ ներդրողները:

Հակամարտությանն ու կիրառված պարտժամրոցներին ի պատասխան՝ առաջին նկատելի քայլերից մեկը կատարել է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկը: Փետրվարի 28-ին Ռուսաստանի ԿԲ տնօրենների խորհուրդը որոշել է վերաֆինանսավորման տրոստարույքը բարձրացնել ավելի քան կրկնակի՝ մինչև տարե-




Դիանա ՏԵՐՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2017 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Ֆինանսներ» մասնագիտության «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» մասնագիտացմամբ, իսկ 2019 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան: Նույն տարվանից ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ է: Մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների:

 ORCID - <https://orcid.org/0000-0003-1253-9567>

MOEX Russia, Russia, Moscow:IMOEX, 300



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



MOEX ֆոնդային ինդեքսը 2022 թ. փետրվար-մարտին⁴

S&P 500, United States, NYSE(CFD):US500, 300



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3



S&P 500 բորսայական ինդեքսը 2022 թ. փետրվար-մարտին⁵

⁴ Գծապատկերի աղբյուրը՝ <https://www.investing.com/indices/mcx-chart>, առ 15/03/2022:

⁵ Գծապատկերի աղբյուրը՝ <https://www.investing.com/indices/us-spx-500-chart>, առ 15/03/2022:

S&P, միանգամից մի քանի մակարդակով նվազեցրել են ԱՌուսաստանի, ԱՌկրահինայի վարկանիշները: Գրեթե բոլոր հեղինակավոր ֆինանսական կառույցները վերանայել են իրենց սպասումներն ու գնահատականները բացասական ուղղությամբ: Վատատեսական են ոչ միայն Ռուսաստանի և Ուկրաինայի ՀՆԱ-ների, այլև համաշխարհային տնտեսության առումով կանխատեսումները. սպասվում է, որ այս տարի համաշխարհային տնտեսությունը կաճի ավելի նվազ չափով, քան նախկինում նախանշվում էր: Ինչպես գնահատում է Fitch Ratings միջազգային վարկանշավորող գործակալությունը, ռուս-ուկրաինական հակամարտության շրջանակներում արդեն սահմանված և ծրագրավորվող պատժամիջոցները, առաջին հերթին, լուրջ խնդիրներ կարող են առաջացնել նախկին խորհրդային երկրների տնտեսությունների համար:

Հակամարտության ծավալների, պատժամիջոցների ժամկետների, հնարավոր հետևանքների շուրջ առկա անորոշությունը, Ռուսաստանի և Ուկրաինայի ինքնիշխան վարկանիշների նվազեցումը մեծացնում են դեֆոլտային սպասումների հավանականությունը: Հակամարտող երկու երկրներն էլ այժմ կանգնած են դեֆոլտի վտանգի առաջ, ինչն ավելի է սրում ներդրողների մտավախությունները և խուճապային տրամադրությունները: Չնայած առկա բարդ իրավիճակին՝ Ուկրաինայի ֆինանսների նախարարությունը լավատեսորեն է տրամադրված իր ֆինանսական պարտավորությունները կատարելու հարցում՝ մեծ հույսեր կապելով Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, այլ կառույցների և աջակից

երկրների ֆինանսական և ռազմական օգնության հետ: Բացի արտաքին ֆինանսավորման աղբյուրներից, Ուկրաինան թողարկել է նաև «պատերազմական» պարտատոմսեր՝ նախատեսված ներքին շուկայի համար: Ռուսաստանը, իր հերթին, ունի թողարկված պետական պարտատոմսեր, որոնց գծով մոտ ապագայում կիրականացնի վճարումներ: Ռուսաստանի ֆինանսների նախարարությունը ծրագրում է օտարերկրյա ներդրողների հանդեպ իր պարտավորությունները մարել ռուսական ռուբլով, ոչ թե ԱՄՆ դոլարով՝ հաշվի առնելով այն փաստը, որ Ռուսաստանի միջազգային պահուստների մեծ մասը հայտնվել է պատժամիջոցների ներքո:

Առկա բարձր ռիսկայնության, անորոշության, վատատեսական սպասումների պայմաններում, արագ ու անկանխատեսելիորեն փոփոխվող իրավիճակում դժվար է հստակ գնահատականներ տալ տարբեր երկրների ու ամբողջ աշխարհի տնտեսության և ֆինանսական համակարգի վրա ռուս-ուկրաինական հակամարտության հավանական հետևանքներին: Մինչ այժմ ֆինանսական շուկաների մասնակիցների, ֆինանսական կառույցների շրջանում գերակշռում են բացասական կանխատեսումներն ու տրամադրությունները, ինչից ելնելով էլ՝ կենտրոնական բանկերը դրամավարկային քաղաքականությամբ փորձում են զսպել գնաճը և հետևողականորեն պահպանել ֆինանսական կայունությունը, իսկ ներդրողներն իրենց վարքագիծը դարձնում են էլ ավելի պահպանողական և փորձում արագորեն արձագանքել նոր ի հայտ եկող իրողություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մոսկվայի բորսայի կայքէջ՝ www.moex.com:
2. Ռուսաստանի կենտրոնական բանկի կայքէջ՝ www.cbr.ru:
3. CME FedWatch Tool կայքէջ՝ www.cmegroup.com:
4. www.fitchratings.com
5. www.ft.com
6. www.investing.com
7. www.moodys.com
8. www.spglobal.com

Диана ТЕРЯН
Аспирант, АГЭУ

РЕАКЦИЯ МЕЖДУНАРОДНЫХ ФИНАНСОВЫХ РЫНКОВ НА РОССИЙСКО-УКРАИНСКИЙ КОНФЛИКТ

Военный конфликт между Россией и Украиной, безусловно, оказывает влияние на экономику и финансовые рынки не только этих двух стран, а также всего мира. В условиях высокого риска, неопределенности, пессимистичных ожиданий инвесторы и финансовые институты стараются оперативно реагировать на постоянно меняющиеся реалии. Участники рынка следят за сложившимися тенденциями на рынке, прогнозами авторитетных организаций, шагами, предпринимаемыми конфликтующими странами для обслуживания государственного долга, смягчения введенных санкций и т.д.

Ключевые слова: *конфликт, ставка рефинансирования, финансовые рынки, пессимистические ожидания*

Diana TERYAN
PhD student, ASUE

REACTION OF INTERNATIONAL FINANCIAL MARKETS TO THE CONFLICT BETWEEN RUSSIA AND UKRAINE

The military conflict between Russia and Ukraine, surely, affects the economy and financial markets not only of these two countries, but also of the whole world. In the conditions of high risk, uncertainty, pessimistic expectations, investors and financial institutions try to respond quickly to the ever-changing realities. Market participants observe the prevailing tendencies in the market, the forecasts of famous organisations, the steps taken by the conflicting countries for the public debt service and mitigation of the consequences of the implemented sanctions, etc.

Keywords: *conflict, refinancing rate, financial markets, pessimistic expectations*